

# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



## Melkonian Alumni & Friends

Կիպրոսի Դատարանի Վճիռը կը հրամանագրէ Հ.Բ.Ը. Միութեան, որեւէ փոփոխութեան չ'ենթարկել Մելգոնեան Կրթական Հաստատութեան անշարժ կալուածները, նաեւ կ'արգիլէ անոնց օգտագործումը այլ նպատակներու համար:

Ինչպէս ծանօթ է, Կիպրոսի մէջ Յունիս 2005-ին սկսաւ Մելգոնեանի փակումը եւ վաճառումը արգիլելու դատական գործընթացը՝ ընդդէմ Հ.Բ.Ը. Միութեան Կեդրոնական վարչութեան միակողմանի որոշումին:

Այսու կը փափաքինք տեղեկացնել թէ շնորհիւ Մելգոնեան Սանուց Միութիւններու տարած յամառ եւ յարատեւ աշխատանքին, ինչպէս նաեւ նիւթական մեծ զոհողութիւններու իբրեւ արդիւնք, արդար եւ օրինատր յաջողութիւն մը արձանագրուեցաւ Նիկոսիոյ դատարանին մէջ, Փետրուար 3, 2006-ին, Մելգոնեանի հարցին առնչութեամբ:

Կ. Պոլսոյ Պատրիարք, Ամէն. Տ. Մետրոպ Արք. Մութաֆեանի առաջնորդութեամբ, (որպէս դիմում ներկայացնող կողմ), եւ Մելգոնեան Սանուց Միութիւններու կարգադրութեամբ, կիպրացի փաստաբաններու խմբակը, (Christina Sarri, Costas Velaris եւ նախկին ընդհ. դատախազ Markidis), Օգոստ. 28, 2005-ին Նիկոսիոյ դատարանին Հայց ներկայացուցին, որպէսզի դատարանի հրամանագրով խափանուի (Injunction) Հ.Բ.Ը. Միութեան կողմէ ծրագրուած Մելգոնեան Կրթական Հաստատութեան փակումը եւ անշարժ կալուածներու մասնակի կամ ամբողջական վաճառումը, ինչպէս նաեւ կասեցուի դպրոցի շէնքերուն օգտագործումը՝ այլ նպատակներու համար: Միաժամանակ, դատարանի հրամանագրով արգիլուի որպէսզի Հ.Բ.Ը. Միութիւնը (որպէս պաշտպանեալ կողմ) որեւէ ձեւով դադրեցնէ կամ արգելակէ Մելգոնեան վարժարանի գործունէութեան կանոնատր եւ հեզասահ ընթացքը: Այս դիմումագիրը ընդունուեցաւ դատարանին կողմէ Օգոստոս 28, 2005-ին եւ Հրամանագիրը (Injunction) անմիջապէս յանձնուեցաւ Հ.Բ.Ը. Միութեան Պաշտպան փաստաբաններուն, որոնք այնուիտեւ դատարան ներկայանալով առարկեցին Հրամանագրին դէմ եւ իրենց պատճառաբանութիւնները ներկայացնելով՝ խնդրեցին դատարարէն որ չեղեալ նկատէ զայն: Ապա Դեկտ. 20, 2005-ին դատարանի առջեւ ունկնդրութիւն տեղի ունեցաւ ուր երկու կողմերը արտայայտեցին իրենց թեր ու դէմ առարկութիւնները:

Ուրեմն, Փետրուար 3, 2006-ին դատարարը վերջնական վճիռով մը հաստատեց եւ վաւերացուց Օգոստոս 28, 2005-ին տրուած որոշումը եւ դատարանին արձակած Հրամանագրին օրինատրութիւնը: Այս վճիռը կը հրահանգէ եւ կը պարտադրէ Հ.Բ.Ը. Միութեան՝ որեւէ փոփոխութեան չ'ենթարկել Մելգոնեանի կալուածները: Այս վճիռը ո՛չ միայն կ'արգիլէ վաճառումը Մելգոնեանի անշարժ կալուածներուն (մասնակի կամ ամբողջական), այլ նաեւ կ'արգիլէ դպրոցի շէնքերուն օգտագործումը տարբեր նպատակներու համար: Այս հրամանագիրը ի զօրու կը մնայ մինչեւ դատավարութեան աւարտը, որով, վերջ ի վերջոյ պիտի որոշուի Մելգոնեան Կրթական Հաստատութեան ճակատագիրը:

Արդ՝

- յանուն 2200-է աւելի աշխարհացրի Մելգոնեանցիներու,
- յանուն Կ. Պոլսոյ Պատրիարքարանին, որ ըստ բարերար Կարապետ Մելգոնեանի կտակին՝ հիմնադիրն ու առաջին իրաւատէրն է եղած Մելգոնեան Կրթ. Հաստատութեան,
- յանուն Հայ ժողովուրդի հայատրոբ զանգուածներուն՝ Սփիւռքի եւ Հայրենիքի տարածքին,

Կոչ կ'ուղղենք Հ.Բ.Ը. Միութեան ներկայ ղեկավարութեան՝ վերականգնելու եւ վերաբանալու նոր եւ վերակազմեալ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը Կիպրոսի մէջ, մեր մեծ Միութեան փառապանծ 100-ամեակի սէմին ...:

Մելգոնեան Սանուց եւ Բարեկամներ  
Melkonian Alumni & Friends  
Glendale, California.

Փետրուար 17, 2006

[www.melkonianforever.org](http://www.melkonianforever.org)